



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 38 - Ա  
24 փետրվարի 2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2014 թվականին ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ «**ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԲԱԿ**», «**ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ**» ԵՎ «**ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ**» ՍՏՈՒԳԱՏԵՄՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ, 1.19-րդ կետերի և 2004թ. մայիսի 20-ի ՆԿ-113-Ն կարգադրության պահանջներով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 18.02.2014 թվականի «Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական բակ», «Լավագույն քաղաքային մարզական համայնք» և «Լավագույն գյուղական մարզական համայնք» հանրապետական ստուգատեսների կանոնակարգերը հաստատելու մասին» N22-Ա/1 հրամանը

**Կարգադրում եմ՝**

1. Հաստատել՝
  - 1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2014 թվականին Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական բակ», «Լավագույն գյուղական մարզական համայնք» և «Լավագույն քաղաքային մարզական համայնք» ստուգատեսները կազմակերպելու և անցկացնելու կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N1 հավելվածի.
  - 2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2014 թվականին Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական բակ», «Լավագույն գյուղական մարզական համայնք» և

<<Լավագույն քաղաքային մարզական համայնք>> ստուգատեսները կազմակերպելու և անցկացնելու ժամանակացույցը՝ համաձայն N2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝ ցուցաբերել ակտիվ մասնակցություն Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական բակ>>, <<Լավագույն գյուղական մարզական համայնք>> և <<Լավագույն քաղաքային մարզական համայնք>> ստուգատեսներին:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս.Խլիլյանին:

6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



Ա. ՀԱԿՈՒՅԱՆ